ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴՐԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Կրթական գործընթացում ներգրավված ցանկացած անձ կփաստի, թե աշակերտների առաջադիմության և դրական ինքնազգացողության տեսանկյունից որքան կարևոր է դասարանում տիրող մթնոլորտը:

Քննարկենք դասարանական դրական մթնոլորտի ստեղծմանն ու պահպանմանը նպաստող մի քանի սկզբունքներ:

- Կարևոր է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշակերտ հավատում է, որ ինքն ընդունակ է սովորել, բարելավել, զարգացնել իր գիտելիքներն ու հմտությունները: Այսպես, ամեն մեկը պատասխանատու է իր ակադեմիական արդյունքների համար:
- Դասարանում առկա է սովորելու մթնոլորտ, որտեղ որևէ բան չիմանալը կամ սխալվելը ամոթ չէ: Սխալներն ուսուցման կարևոր մասն են, որոնք օգնում են հասկանալ ուսուցանվող նյութն առավել խորությամբ:
- Արդյունավետ դասարանական մթնոլորտ ունեցող դասարանում յուրաքանչյուրը հարգված և գնահատված է որպես անհատականություն: Նման մթնոլորտում տեղ չկա հեգնանքի, ծաղրի, նվաստացման, բռնության համար:
- Միմյանցից սովորելու մշակույթ: Դասարանում ոչ միայն աշակերտները սովորում են ուսուցիչներից, այլև աշակերտները միմյանցից, ուսուցիչն աշակերտներից:
- Օգնության դիմելու մշակույթ: Դասարանի աշակերտները կարող են դիմել թե միմյանց, թե ուսուցչի օգնությանը: Միաժամանակ մյուսների կողմից տրամադրվող օգնությունը

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

պետք է լինի զարգացնող, չափավոր, որպեսզի
չխոչընդոտի սովորողի ինքնուրույնությանը:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: